

**ԿԵՍԱՐԻԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ ԺԹ. ԴԱՐԻ
ՎԵՐՋԻՆ Ի. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ՝ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ**

Կեսարիան օսմանեան կայսրութեան հայաշատ բնակավայրերից էր, որտեղ հայերը հաստատուել էին դեռեւս բիւզանդական կայսրութեան ժամանակներից, իսկ ԺԱ. դարում հայկական իշխանութիւնների անկումից յետոյ Հայաստանից սկսուած մեծ արտագաղթի հետեւանքով Կապադովկիայում ագգաբնակչութեան պատկերը փոխուեց այնպէս, որ հայերն այնտեղ մեծամասնութիւն էին կազմում, եւ ինչպէս վկայում են աղբիւրները (Միխայիլ Փսելլ, Կասիա միանձնուհի) արդէն «հայ» եւ «կապադովկիացի» համարժէք հասկացութիւններ էին, յամենայն դէպս յոյները գերադասում էին երկրորդը՝ «հայ» անուանումից խուսափելու համար: Դրանով է բացատրւում Կեսարիայում եւ շրջակայքում հայերէն ձեռագրերի, եկեղեցիների եւ վանքերի, մշակութային ու ճարտարապետական այլ կառոյցների առատութիւնը, եւ ինչպէս ասում են «հայերի մերկայութիւնը Կապադովկիայում»: Թուրքական տիրապետութեան սկզբնական շրջանում դեռեւս պահպանւում էր այդ վիճակը, չնայած որ ԺԵ.-ԺԶ. դարերում արդէն թուրքերին դա խիստ անհանգստացնում էր եւ նրանք պարբերաբար տեղահանութիւններով եւ բռնագաղթերով մեծ թուով հայերի եւ յոյների հեռացրել էին իրենց մշտական բնակավայրերից և փոխարէնը մահմեդականներով բնակեցրել տարածքը: Միջնադարից սկիզբ առած այդ քաղաքականութիւնը, որ սովորաբար ուղեկցւում էր կողոպուտով, աւերումով եւ հրկիզումներով ու բռնի դաւանափոխութեամբ՝ շարունակուեց մինչեւ ԺԹ. դարի 90ական թուականները, հասնելով 1915 եւ ընդհուպ մինչեւ «յեղափոխական» քեմալականները՝ Ի. դարի 20ական թուականները:

1 Հայոց մօր վկանքը, աշխատասիրութեամբ Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆԻ եւ ՀՐ. Ա. ՃԱՌԵԱՆԻ, Վաղարշապատ 1903:

Մրազրուած եւ պարբերաբար կրկնուող այդ գործողութիւններով սուլթանական վարչակարգին յաջողուեց փոխել ազգաբնակչութեան պատկերը յօգուտ մահմեդականների, այսինքն՝ ԺԹ. դարի կէսերին Կեսարիայի ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմում էին մահմեդական թուրքերը, իսկ քրիստոնեայ ժողովուրդները՝ հայերը եւ յոյներն էին, այն էլ արդէն հիմնականում՝ թրքախօս:

Կեսարիան որպէս առաջնորդական վիճակ կազմաւորուել է դեռեւս ԺԲ. դարում, յիշատակում է 1178ին՝ Հռոմիլայի եկեղեցական ժողովի աւիթով:

Տրդատ վարդապետ Պալեանը, որն իր ժամանակի մտաւորական հոգեւորականներից էր, կեսարահայերի կողմից 1887ին ընտրուել էր Կեսարիայի թեմի առաջնորդ: Մնուել է 1850ին Կեսարիայի Թալաս գիւղում, նախնական կրթութիւնը ստացել է ծննդավայրի Վարդ-Պատրիկեան դպրոցում, ապա՝ Զմիւռնիայի Մեսրոպեան վարժարանում: 1878ին մեկնել է Երուսաղէմ եւ որոշ ժամանակ աշխատելով վանական միջավայրում, 1881ին ձեռնադրուել է սարկաւազ, մէկ տարի անց՝ վարդապետ: 1887-1910 եղել է Կեսարիայի առաջնորդ, 1899ին ստացել է ծայրագունութեան աստիճան, ձեռնադրուել է եպիսկոպոս²:

Ընտրուելու առաջին իսկ օրից նրա գործունէութիւնը եղել է բազմաբնոյթ. երիտասարդ, եռանդով լի նորընտիր առաջնորդը ձեռնամուխ է լինում միաժամանակ բազմաթիւ դեռեւս չարուած եւ թերաւարտ գործերի: Պալեանը իր նախորդներից ժառանգել էր քայքայուած վանական տնտեսութիւն, պառակտուած ու վարկաբեկուած միաբանութիւն, որ հէնց սկզբից էլ չէր թաքցնում իր անբարեացակամ վերաբերմունքն առաջնորդի հանդէպ, սակայն վերջինս չէր ընկրկում ղեկարութիւնների առաջ եւ գործում էր առանց յուսահատուելու: Նախաձեռնած առաջին գործը 1784 թուականից ի վեր գոյութիւն ունեցող վարժարանի վերաբացումն էր, որ մինչ այդ շատ անմխիթար վիճակի մէջ էր: Եւ քանի որ գաւառական ժողովը մերժել էր առաջնորդին, Պալեանն իր ունեցած անձնական միջոցներով ձեռնամուխ եղաւ այդ գործին, հիմնովին վերանորոգելով վարժարանը եւ գրադարանը, բարեկարգելով վանական տնտեսութիւնը եւ Կե-

2 Տրդատ եպիսկոպոս Պալեանի կենսագրութեան մանրամասները եւ գործերի մատնագիտութիւնը տես՝ Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ ժողովածոյի երկրորդ մասը՝ ԱԻԵՏԵԱՆ Կ., Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, Երեւան 2002, էջ 181-246:

սարիայի մերձակայ քաղաքների եւ գիւղերի դպրոցներից ընտրուած 16 աշակերտներով եւ միակ ուսուցիչ՝ Դանիէլ Նշանանի ուղեկցութեամբ 1888ի Մայիսին սկսուեցին Ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանի դասերը: Ինչպէս յետագայում գրել են վարժարանի շրջանաւարտ սաները. «...Շատ պարզ եւ անշուք սկզբնաւորութիւն մը ունեցող այս վարժարանը, տարիներ վերջ պիտի ըլլար Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց փարոսը»³ եւ առաջնորդի ջանքերի շնորհիւ էր, որ թրքախօս Կեսարիան աստիճանաբար դառնում է հայախօս, հայագիր եւ ազգային ինքնագիտակցութեան զարթօնք է ապրում:

Վարժարանը նրկթական միջոցներով ապահովելու համար առաջնորդը, որ նաեւ տեսուչն էր, դիմել է Կ. Պոլսում եւ արտասահմանում գտնուող մեծահարուստ կեսարացի հայրենակիցներին, որոնք պատրաստակամ իրենց աջակցութիւնն են յայտնել: Կարճ ժամանակ անց ոգեւորուելով ցուցաբերուած վերաբերմունքից, Պալեանը որոշում է իրականացնել իր մտադրութիւնը եւ նախապէս որպէս ժառանգաւորաց վարժարան բացուած դպրոցը 1893ին կրթութեան նախարարութիւնից ստանում է արտօնագիր, որով գիշերօթիկ վարժարանը ճանաչուած է բարձրագոյն ազգային կրթական հաստատութիւն, միաժամանակ հեռատեսօրէն պահպանելով ժառանգաւորաց անունը: Կարգավիճակի այդ փոփոխութիւնից յետոյ Պալեանը կազմել եւ հրատարակել է վարժարանի ծրագիր-կանոնադրութիւնը՝ «Հիմնական կանոնք եւ ծրագիր ուսմանց ժառանգաւորաց վարժարանի Ս. Կարապետի վանուց ի Կեսարիա, հաստատուել 1888» եւ որ պարբերաբար վերահրատարակուել է, պարզ չէ՝ ինչ յաճախականութեամբ եւ մինչեւ երբ: Ծրագիրը, որ նրա հիմնած «Հրատարակչական միութիւն Ս. Կարապետի վանուց» անունով ընկերութեան հրատարակութիւնն է, տեղեկացնում է, որ ուսման տեւողութիւնը եղել է վեց տարի, դասաւանդուել են լեզուներ՝ հին եւ նոր հայերէն, ֆրանսերէն, թուրքերէն, բարոյագիտութիւն, տոմարակալութիւն (հանրահաշիւ), աշխարհագրութիւն, իրաւաբանութիւն, գծագրութիւն, երաժշտութիւն: Տրդատ եպիսկոպոսը դասաւանդել է կրօնագիտութիւն, պատմութիւն առարկաները: Նա այն հոգեւորականներից էր, որ իր գործունէութեան մէջ մեծագոյն նշանակութիւն էր տալիս կրթական գործին: Նա ոչ միայն Ս. Կարա-

3 ՈՒՂՈՒՐԼԵԱՆ Հ. - ԱՐՐԱՀԱՄԵԱՆ Կ., Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը, Բարձրագոյն վարժարանը եւ Տրդատ եպս. Պալեան. Կեսարիոյ առաջնորդական աթոռը եւ առաջնորդներ. Ընդարձակ տարեցոյց, 1928, 237-238:

պետի վարժարանի հիմնադիրն էր, այլև մշակել եւ իրականացնում էր կրթութեան միասնական համալիր ծրագիր Կեսարիայի ողջ նահանգում. «...Կեսարիոյ եւ համայն Փոքր Ասիոյ լոյսի փարոս մը, որ 27 տարիներ անդադար պիտի լուսաւորէր տգիտութեան խաւարին մէջ մնացող հայարնակ վայրերը»⁴: Ժամանակի ընթացքում Կեսարիայից եւ շրջակայքից գիշերօթիկ վարժարանում սովորողների թիւն արդէն այնքան էր մեծացել, որ նոր շէնքի կառուիք էր զգացուում, ինչն էլ իրականացուում է, եւ 1903ի ուսումնական տարին կեսարացիները սկսում են հոյակապ նորակառոյց վարժարանի շէնքում: Նորակառոյց վարժարանի մասին «Արեւելեան Մամուլ»ը հիացմունքով գրել է. «Կեսարիոյ քարեջան Առաջնորդ Գեր. Տրդատ եպիս. Պալեան պատիւ ըրած է մեզ դրկելու Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին կից նորակառոյց վարժարանին լուսանկարը. սոյն կրթարանին շինութիւնը ասկից չորս-հինգ ամիս առաջ ամրոցողովին աւարտած եւ անցեալ հոկտեմբեր ամսոյ մէջ ալ ներքին կահաւորումը լրանալով՝ տեղափոխութիւնը կատարուած է նոյն ամսուն, եւ դասախօսութիւնք սկսած են բոլորովին նոր ծրագրով եւ նոր կարգադրութեամբ: Ջերմապէս կը շնորհաւորենք Պալեան Սրբազանը այս գեղեցիկ յաջողութեան համար, որով Կեսարիոյ նման բազմահայ վիճակ մը կրցաւ օժտել կրթական հաստատութեամբ մը եւ այս՝ գլխաւորապէս շնորհիւ իր յարատեւող եւ կրթասէր ոգիին եւ մասամբ Կեսարացի ազգայնոց փոյթեռանդն գործակցութեան»⁵: Այստեղ ուսանողները կրթութեան հետ միասին ստանում էին ոչ պակաս կարեւոր՝ դաստիարակութիւն, որ ձեւաւորում էր ազգային աւանդութիւններին նախանձախնդիր գիտակցութեամբ օժտուած անհատներ, որոնք իրենց յետագայ գործունէութեամբ ապահովել են Ս. Կարապետի վարժարանի եւ նրա հիմնադիր Տ. Եպս. Պալեանի անունն ու բարի համբաւը: Վարժարանը, չնայած որ գործում էր վաղեմի կից, եւ հիմնադիրն էլ հոգեւորական ու թեմի առաջնորդն էր, սակայն շատ աշխարհիկ ուղղութեամբ ունէր, որ ծրագրուած էր Պալեանի կողմից, եւ շրջանաւարտների մեծ մասը նախընտրում էին մանկավարժութեան ասպարէզը, մանաւանդ որ հայաբնակ գաւառներում մեծ համարում ունէին Պալեանի վարժարանի սաները ու այդ ամբողջ ընթացքում յայտնի է, որ ընդամենը մէկ շրջանաւարտ է նուիր-

4 ՏԷՄԻՐՃԵԱՆ ՎԱՐԴԱՆ ԵՊՍ., Դիմաստուերներ. Ազգային եկեղեցական տիպարներ, Պէյրութ 1983, էջ 161:

5 «Արեւելեան Մամուլ», Լրաբաղ, 1904, էջ 288, նաեւ՝ «Արեւելք» օրաթերթի խմբագրականը՝ Տ. Ա. Պատկերի մը առջեւ 1904, հմր 5503, 2/15 մարտ, 1:

րուել հոգեւոր բնագաւառին՝ ձեռնադրուել կուսակրօն վարդապետ: Իր գոյութեան 27 տարիների ընթացքում (1888–1915) վարժարանը տուել է 201 շրջանաւարտներ: Ինչպէս նշեցինք Պալեանը Հիմնադրել էր «Հրատարակչական միութիւն Ա. Կարապետի վանուց» անունով ընկերութիւն, որ ծրագրել էր դասագրքեր հրատարակել⁶:

Դպրոցական-կրթական գործին զուգընթաց եւ միաժամանակ՝ նրա յաջորդ քայլը մատենադարանի ու թանգարանի հիմնադրումն էր, որի համար չի խնայել իր անձնական կարողութիւնը: Դեռեւս 1891ին գրել է, որ Ս. Կարապետ վանքի նոր գրատունը ունի 100 կտոր գրչագիր, որ հետզհետէ «աւելցնելու փոյթ կը տարուի», աւելացնելով որ պատրաստել է կանոնաւոր մի ձեռագրացուցակ՝ «հանդերձ յիշատակարանօք եւ մանրամասն տեղեկութեամբք, այն նպատակաւ, թէ մի օր կը հրատարակուի»: 1894ին մատենադարանն ունէր 180 ձեռագիր եւ 1000 կտոր տպագիր մատեան: Պալեանը ծրագրել էր Կեսարիայի վիճակի ձեռագրերի նկարագրութիւնը՝ բաղկացած 15 պրակներից, ամփոփել առաջին հատորի մէջ, որից յետոյ պէտք է անցնէր միւս վիճակները եւ վանքերը՝ պրպտելու ձեռագրերը ցուցակագրութեան եւ առանձին հատորներով հրատարակելու համար: Զեռագրերի առաջին նկարագրութիւնները՝ «Թեմոքայք Կեսարիոյ վիճակին եւ ազգային հին ձեռագիրք», Կեսարիայի Ս. Աստուածածին եկեղեցու, Ս. Սարգսի վանքի, Մաղնիսայի (Զմիւռնիայի վիճակ), Ս. Սիոն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիների՝ նախ հրապարակել է Պոլսի եւ Զմիւռնիայի մամուլում⁷, այնուհետեւ՝ առանձին պրակներով, ամբողջական հատորով հրատարակելու յոյսը սրտում պահած:

6 Յայտնի չէ՝ Ընկերութիւնը դասագրքեր հրատարակել է, թէ ոչ, սակայն, այսուհանդերձ, յայտնի է առնուազմ երեք գրքոյկի անուն, որպէս «Հրատարակութիւն Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց Ժառանգաւորաց» ընկերութեան հրատարակութիւն. ա. *Յուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա*, Կ. Պոլիս 1892, Բ. *Նշանագիրք Հայոց*, Վիեննա 1898, Գ. *Հիմնական կանոնք եւ ծրագիր ուսմանց*, 1894. Վերջինը պարբերաբար վերահրատարակուել է եւ որ Հայաստանի գրադարաններում չկայ, միայն երկու (1894–Ա.) եւ (1897–Գ.) հրատարակութիւնների նկարագրութիւնը տես՝ ՂԱԶԻԿԵԱՆ Ա., *Հայկական մոյր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կենսագիր*, Վեներտիկ 1909, 1565:

7 «Մաղիկ», Ա. Տարի, Կ. Պոլիս, 1891, հմր 41, 1-2, հմր 47, 2, հմր 48, 6: «Արեւելեան Մամուլ», Իէ. Տարի, Զմիւռնիա 1897, հմր 4, 127-131, հմր 5, 171-174, հմր 7, 237-243:

1903ին արդէն Կեսարիայի վիճակի վանքերում, եկեղեցիներում ու անհատների մօտ գտնուող Պալեանի ցուցակագրած ձեռագրերի ընդհանուր թիւը հասել է 650ի. «Ցուցակն առ այժմ մեր քով կմնայ ձեռագիր, որովհետեւ տպագրութեամբ ի յոյս ընծայելու համար մեր նիւթակամ կարողութիւնը չի ներեր»⁸։ Աւելի ուշ, երբ այլեւս մարել էր առանձին հատորով հրատարակելու յոյսը, Հ. Ն. Ակինեանի յորդորներին անսալով՝ վերջապէս 1921ին սկսել է մաս մաս ուղարկել, «Համդէս Ամսօրեայ»ի մէջ հրատարակելու համար, սակայն իրեն վիճակուած չէր տեսնել այդ հրապարակումը՝ իրականացած միայն 1959-1960, «Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի Նոր Գրադարանի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա» վերնագրով⁹։ Պալեանի նկարագրութիւններէց մեզ հասել եւ յայտնի է առայժմ 170 ձեռագրի նկարագրութիւն եւ 10 ձեռագիր՝ Երեւանի, Երուսաղէմի, Նիւ-Եորքի, Վիեննայի, Կ. Պոլսի ձեռագրական հաւաքածոներում։ Նրա՝ տարբեր առիթներով ձեռագրերի թուի վերաբերեալ յիշատակումները ի մի բերելով եւ ամբողջացնելով ստանում ենք Կեսարիայում գրուած եւ ընդօրինակուած ու չպահպանուած գրչագրերի ընդհանուր պատկերը՝ աւելի քան 700 ձեռագրեր եւ դրանց անտիպ նկարագրութիւնները, որոնց կորուստը այլեւս անդարձ ու անփոխարինելի է հայկական մշակոյթի համար։

Հնատիպ բազմաթիւ գրքերի (ոչ լրիւ հաշուարկով պահպանուած 22 անուն) առկայութիւնը Կեսարիայում եւ գիւղերում (Պալկասի, Թաւուսուն, Մունճուսուն, Նիրզէ, Ս. Կարապետի վանք) թոյլ է տալիս եզրակացնել, որ Ի. դարի սկզբներին արդեն մեծ մասամբ թրքախօս դարձած Կեսարիայի հայութիւնը ժամանակին եղել է հայախօս, գրագէտ, գրասէր ու ընթերցասէր։

1865-1878 թուականներին դեռեւս Մաղնիսայում գտնուած ժամանակից սկսած Պալեանը հաւաքում էր ձեռագրեր, հնատիպ գրքեր, արխիւային նիւթեր, գորգեր, դրամներ, դրոշմանիշեր, կնիքներ։ Նա հետաքրքրուել է նաեւ բանահիւսութեամբ. հաւաքել է հէթիւթներ, հանելուկներ, առածներ ու ասացուածքներ, աշուղական երգեր, որի արդիւնքում հրատարակել է երկուական

8 ՊԱԼԵԱՆ, Տ. ԵՊՍ., Հետաքրքրական կոնդակ մը, «Բիւզանդիոն», 1903, հմբ 1933, 1։

9 Հրատարակուել է նաեւ առանձին գրքով՝ Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, կազմեց ՏՐԴԱՏ ԵՊ. ՊԱԼԵԱՆ, Վիեննա, 1963։

հատոր՝ Հայ աշուղներ¹⁰ եւ առածների ու ասացուածքների¹¹: Աշուղների հաւաքածուն Պալեանը կազմել է ձեռագրերից, տպագիր գրականութիւնից եւ բանաւոր՝ անձնական շփումներից աշուղների հետ, հաւաքել է հայերէն, թուրքերէն, պարսկերէն երգեր: Ամբողջ գործը նախատեսել էր ամփոփել հինգ հատորների մէջ, որի վերջին՝ հինգերորդ հատորում պէտք է գետեղէր իր ինքնակենսագրութիւնը, ամենայն մանրամասնութեամբ: Ակնի, Կեսարիայի եւ գիւղերի՝ Էվերեկի, Նիրզէի, Էֆքերէի, Մուսնուսունի բարբառներով գրի է առել նաեւ զրոյցներ, հէքիաթներ, հանելուկներ, անտունիներ, օրօրոցայիններ, սիրերգեր, որոնց մի մասը հրատարակել է մամուլում:

Վանքերի մասին իր աշխատանքի աշխարհագրութիւնը բաւական ընդարձակ է. Կեսարիա, Սեբաստիա, Եւդոկիա, Ամասիա-Մարգուան, Շապին Գարահիսար, Տիվրիկ, Տրապիզոն, Բարձըր Հայք, Խարբերդ, Ակն, Արաբկիր, Մալաթիա, Բաղէշ, Մանազկերտ, Մուշ, Եղեսիա, Կիլիկիա, Վան եւ շրջակայք: Վանքերի մինչեւ այսօր մեզ հասած նրա նկարագրութիւնների թիւը հասնում է 346ի: Պալեանի նկարագրած այդ վանքերն այսօր մեծ մասամբ չկան, կամ գրեթէ բոլորն աւերուած են: Այս գործի առիթով կազմել է նաեւ Անկիւրիայի, Կեսարիայի Ս. Կարապետ, Ս. Դանիէլ, Զմիւռնիայի Ս. Ստեփանոս, Սեբաստիայի Ս. Նշան, Մարգուանի Ս. Աստուածածին, Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքերի առաջնորդների գաւազանագրքերը: Ամենաընդարձակ եւ մանրամասն նկարագրութիւն-պատմութիւնը, բնականաբար, Կեսարիայի առաջնորդանիստ Ս. Կարապետ վանքինն է, ինչպէս նաեւ ամենածաւալունը՝ նոյն վանքի գաւազանագիրքը, որի մէջ օգտագործել է յիսունի մօտ ձեռագիր յիշատակարաններ, բազմաթիւ արձանագրութիւններ, տապանագրեր¹²:

10 Հայ աշուղներ. Ժողովրդական հայ երգիչներ եւ տաղասաց, հտր. Ա., Իզմիր 1911, 288 էջ: Հտր. Բ., Իզմիր 1912, 240 էջ:

11 Ժողովրդական առածներ եւ զանազան ասացուածք. Պր. Ա., 56 էջ, պր. Բ., 64 էջ, Զմիւռնիա 1912:

12 Տրդատ եպ. Պալեանի կենսագրութիւնը եւ գործերի մատենագիտութիւնը պատրաստելիս խոստացել էինք մէկտեղել եւ գրքի տեսքով լոյս ընծայել «Իիւզանդիոն»ում տպուած եւ առկայ միակ գրքի (Հայ վամօրայք ի Թուրքիա, Գաղատիոյ, Սեբաստիոյ եւ Տրապիզոնի կուսակալութեանց մէջ եղած վամօրայք, Զմիւռնիա 1914, 204 էջ) մէջ չընդգրկուած նկարագրութիւնները: Սակայն յետագայում համոզուեցինք, որ անհրաժեշտ է մտադրուած գրքի մէջ մէկտեղել ոչ միայն օրաթերթերում սփռուած եւ գրե-

իր հնազանդական, ազգագրական, ձեռագրական հարուստ հաւաքածուներով երազում էր ծննդավայրում ստեղծել Երուսաղէմի մատենադարանի նման հարուստ հաստատութիւն, մշակութային կենտրոն:

Տրդատ եպիսկոպոս Պալեանի կատարած հաւաքչական աշխատանքները բանահիւսութեան, հնազանդութեան, աշուղական արուեստի բնագաւառներում խիստ կարեւոր են, քանի որ վերջինիս գործունէութեան շնորհիւ է, որ այսօր մեզ է հասել Օսմանեան կայսրութեան արեւելեան նահանգների, մասնաւորապէս Կեսարիայի եւ շրջակայքի պատմա-մշակութային կեանքի համահաւաք պատկերը ԺԹ. դարի վերջերից մինչեւ Ի. դարի 20-ական թուականները: Առաջին անգամ Պալեանն ուսումնասիրութեան նիւթ է դարձրել պատմամշակութային յուշարձաններով այնքան հարուստ Կեսարիան, որ մինչ այդ մի անհասկանալի պատճառով շրջանցուել էր եւ չէր արժանացել որեւէ հետազոտողի ուշադրութեանը: Նա առաջիններից մէկն էր, որ կարծես զգալով եւ գիտակցելով անբարենպաստ ժամանակի շունչը, հաւաքել ու հրատարակել է՝ փրկելով կորստից բազմաթիւ արձանագրութիւններ, յիշատակարաններ, ձեռագրերի եւ վանքերի նկարագրութիւններ, բանահիւսական հարուստ նիւթ: Տպագիր եւ անտիպ գործերից մեզ հասածը չնչին մասն է այն հսկայական ժառանգութեան, որ կուտակել էր տարիների իր գործունէութեան ընթացքում: Հարկ է արձանագրել միաժամանակ, որ Պալեանի ունեցած անտիպ ուսումնասիրութիւններն ու հաւաքածոները ընդհանրապէս չեն պահպանուել, ամբողջը ոչնչացուել է 1922ին Ջմիւռնիայի աղէտի՝ թուրքական յարձակման օրերին:

ԿԱՐԻՆԷ ԱՒԵՏԵԱՆ

թէ անգործածելի դարձած յօդուածները, այլեւ պէտք է վերահրատարակել հեղինակի տպագրած առաջին հատորը, որ համաշխարհային պատերազմի ուղղակի նախօրէին Ջմիւռնիայում տպուած լինելով, անհրաժեշտ չափով չի տարածուել, տպաւանակի զգալի մասը գուցէ կորսուել է հեղինակի տանը եղած մշակութային ամբողջ հարստութեան հետ միասին, ուստի մատենագիտօրէն հագուագիւտ եւ գրեթէ անգտանելի է դարձել: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւնը 2008ին իրականացրեց այդ ծրագիրը՝ հրատարակելով ՏՐԴԱՏ ԵՊ. ՊԱԼԵԱՆԻ Հայ վանդայաբն (հրատարակութեան պատրաստեց ԿԱՐԻՆԷ ԱՒԵՏԵԱՆԸ) որպէս Հայրենագիտական շարքի Ա. հատոր:

Summary

CAESAREAN-ARMENIAN COMMUNITY IN THE WRITINGS OF THE DIOCESE LEADER BISHOP TRDAT BALIAN (the end of the 19th and beginning of the 20th century).

KARINE AVETYAN

Caesarea was one of the most populous settlements in the Ottoman Empire where Armenians lived since the reign of The Byzantine Empire. In the 11th century, a huge emigration from Armenia caused demographic changes in Capadocia. Thus Armenians became the majority according to the sources (Michael Psell, sister Kasia). This fact explains the existence of Armenian manuscripts, churches and monasteries, other cultural and architectural monuments in Caesarea and its surroundings as well as “the presence of Armenians in Capadocia”. At the beginning of the Turkish dominion, the situation remained unchanged. In the 15-16th centuries, Turks took control of the situation and occasionally evicted and forcibly relocated a large number of Armenians and Greeks and instead of them the territory was inhabited by Muslims. This policy continued until the 1990s in the 19th century, reaching 1915 and up to the “revolutionary” Kemalists in the 20s of the 20th century.

Due to the above mentioned action, Turkish regime succeeded to change the ethnic image of the people for the benefit of the Muslims. In fact, in the mid-19th century, the majority of the Caesarean population were Turks, Christian representatives were Armenians and Greeks who were mainly Turkish-speakers.

Bishop Trdat Balian investigated the issues of Caesarea's manuscripts, ancient literature, monasteries and folklore. As a diocese leader (1887-1910) he managed to rebuild and reopen St. Karapet's seminary and was involved in education.